

Արթուր ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-Ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ՆՈՐ ՀԱՆՎԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՆՈՐ ԲԱՂԱՔԱՅԻՄԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐԻ

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմքերը հանգամանքներ են, որոնք հնարավորություն են տալիս փոփոխել գործով կայացված եզրակացությունը:

Ժամանակակից դատավարական իրավունքի տեսության մեջ «նոր հանգամանքներ» հասկացությունն ի հայտ է եկել վերջին տասնամյակում: «Նոր հանգամանքներ»-ի իմաստաբանական վերաբերյալ դատավարագետների դատողությունները սահմանափակվում են դրանք նոր երևան եկած հանգամանքներից առանձնացնելով, որպեսզի դատավարական օրենսգրքով նախատեսված այդ հիմքերի ցանկում հակասություն չառաջանա: Կա նաև այլ տեսակետ, համաձայն որի կարիք չկա արտածել ևս մեկ հասկացություն, եթե ոչ մի տարբերություն չկա նոր հանգամանքի և նոր երևան եկած հանգամանքի վարույթների կարգի մեջ¹:

Լեզվաբանության մեջ «հանգամանք» հասկացության տակ հասկացվում է իրավիճակ, կացություն, դրություն, պատճառ, առիթ²:

Պրակտիկայում նոր հանգամանքները երբեմն շփոթվում են նոր ապացույցների հետ և այդ հիմքով գործը վերանայելու դիմումի մեջ հաճախ հենվում են նոր ապացույցների վրա: Մինչդեռ գործով ապացույցներ են համարվում փաստերի մասին օրենքով նախատեսված կարգով ստացված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշա-

նակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը³: Փաստերը ապացույցներ չեն, բայց դրանց համար անհրաժեշտ են ապացույցներ, որոնք կվկայակոչեն այդ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

Ապացույց է այն փաստական տվյալը, որի հետագոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվ.)⁴:

Ընդհակառակը, հանգամանք և ապացույց եզրույթների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ «նոր ապացույց» հասկացությունն իր նշանակությամբ, բնույթով և բովանդակությամբ էականորեն տարբերվում է «նոր հանգամանք» հասկացությունից, ուստի դրանց մույնականացումը անթույլատրելի է:

ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքում դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը, քաղաքացիական գործերի վերաքննիչ և վճարել վերանայման ձևերի հետ միասին, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականության ստուգման երրորդ եղանակն է, քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ: Այն, դատական ակտերի վերանայման վերաքննիչ և վճարել եղանակների մասն,

ԱՆՊՏԵՍԱԲԵՐ - ՀՈԿՏԵՍԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



կոչված է նպաստելու արդարադատության պատշաճ իրականացմանը, օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացմանը:

Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Ռ. Պետրոսյանը, իրենց հարուցման հիմքերով նոր երևան եկած հանգամանքները և նոր հանգամանքները տարբերվում են միմյանցից⁵:

Ի տարբերություն նոր երևան եկած հանգամանքների, նոր հանգամանքներն այն իրավաբանական փաստերն են, որոնք գործի քննության պահին գոյություն չեն ունեցել, առաջացել են դատական ակտը կայացվելուց հետո և հիմք են հանդիսանում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար⁶:

Նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները (ՔԴ-Օ 415-րդ հոդվ.):

ՔԴ-Օ 419-րդ հոդվածի համաձայն այդ հոդվածում նշված վեց նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե՝

1) Սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող, սակայն որոշման եզրափակիչ մասում, բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը, գտել է, որ այդ դրույթը կիրառելի է այլ մեկնաբանությամբ:

Վերը նշված նոր հանգամանքի հի-

ման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ դրա միջոցով սպահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն՝ տվյալ դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը վերացնելու դեպքում: Հետևաբար, դատական ակտի վերանայման վարույթը՝ որպես անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոց, պետք է հանգեցնի իրավունքը խախտած դատական ակտի իրավաբանական ուժը կորցնելուն:

Ինչպես նշված է ՀՀ Սահմանադրական դատարանի ստորև բերվող որոշման մեջ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջազգային իրավունքի հանրաճանաչ «*restitutio in integrum*» սկզբունքի բովանդակությունը բացահայտել է իր Պապամիկալոպոսուլոսն ընդդեմ Հունաստանի գործով 1995 թ. հոկտեմբերի 31-ի վճռում (*Papamichalopoulos v. Greece*), որի 34-րդ կետում դատարանը մասնավորապես նշել է. «Վճիռը, որով դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, պատասխանող պետությանը պարտավորեցնում է վերջ տալ իրավախախտմանը և դրա հետևանքների դիմաց



հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը»: Եվրոպական դատարանի այս վճռում արտահայտված «restitutio in integrum» սկզբունքը հետագայում իր արտացոլումը գտավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին R (2000)2 հանձնարարականում: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ հանձնարարականում որպես «restitutio in integrum» սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոց մատնանշվում է գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես գործի վերաքննության հատուկ միջոց է դիտվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը⁷:

Անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման՝ որպես անձի խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի սահմանադրականության, վերաբերյալ իր նախորդ մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներին և վերահաստատելով դրանք՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

- նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն, երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հաստատված փաստով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է,

- օրինական ուժի մեջ մտած դա-

տական համապատասխան ակտը նոր հանգամանքների հիմքով վերանայելու ծավալը, շրջանակները պայմանավորված են հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կարգավորման առարկայով, հարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով, կիրառման շրջանակներով և դրանցով պայմանավորված՝ նաև անձի կոնկրետ իրավունքների խախտման փաստով⁸:

Հիմք ընդունելով խախտված իրավունքների վերականգնման ինստիտուտի վերոհիշյալ բովանդակությունը, ինչպես նաև «restitutio in integrum» սկզբունքի բովանդակությունն ու այդ սկզբունքի երաշխավորմանն ուղղված՝ նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի վերլուծությունը, սահմանադրական դատարանը գտնում է, որ նոր հանգամանքի հիմքով «դատական ակտի վերանայում» եզրույթն իր բովանդակությամբ, ըստ էության, համարժեք է «գործի նորոգում», «գործի վարույթի վերաբացում» եզրույթների բովանդակությանը, և դատական ակտի վերանայում հասկացության նշված ընկալումն էլ պետք է կամխորշի վերանայման վարույթի բովանդակությունը, ծավալը, շրջանակները, խնդիրները և դրա շրջանակում լուծման ենթակա հարցերը: Ըստ այդմ՝ դատական ակտի վերանայման վարույթի, նույնն է, քե գործի նորոգման վարույթի շրջանակում պետք է ձեռնարկվեն այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտության դեպքում կապահովեն նաև գործի վերաքննություն այն ծավալով, ինչը հնարավոր է միայն հակասահմանադրական նորմ կիրառած՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բեկանման և անձի խախտված իրավունքով պայմանավորված՝ դատական ակտի համապատասխան մատով (կամ ամբողջությամբ) վերանայման պայմաններում: Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի մոլայ գործի նորոգում՝ կիրառված կոնկրետ նորմի հակասահմանադրա-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



կանության կոնկրետ փաստի ճանաչման պայմաններում և շրջանակներում: Հաշվի առնելով միջազգային իրավական մոտեցումները, Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ չնայած գործի նորոգում ինստիտուտը քրեական և քաղաքացիական վարույթներում ունի իր առանձնահատկությունները, այսուհանդերձ, դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը մեկ նպատակ է հետապնդում՝ անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության երաշխավորում:

Հաշվի առնելով վերը նշվածները, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա ըստ Սահմանադրական դատարանի՝ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը:

Նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայումն այն բացառիկ դեպքերից է, երբ անձի իրավունքների պաշտպանությունն ապահովելու և սահմանադրական դատարանի որոշումների ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման նպատակները գերակայում են res judicata դոկտրինի (ուսմունքի) հիմքում ընկած սկզբունքների, մասնա-

վորապես՝ իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ: Այս հանգամանքը շեշտադրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում: Մասնավորապես, այս խնդրի առնչությամբ Եվրոպական դատարանը նշում է, որ «... իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ»: (Քսերաժն ընդդեմ Ալբանիայի (Xheraj v. Albania) գործով 2008 թ. հուլիսի 29-ի վճռի 52-53-րդ կետեր):

Ելնելով վերոհիշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման պահանջի մերժումը չի կարող հիմնավորվել «res judicata» դոկտրինի, մասնավորապես՝ դրա հիմքում ընկած իրավական որոշակիության սկզբունքի պահպանման նկատառումներով և անհրաժեշտությամբ⁹:

ՀՀ Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտը վերանայման արդյունքում ուժի մեջ թողնելը չի երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաև դատական ակտերի վերանայման նպատակի և խնդիրների իրացում, և միաժամանակ արգելափակելով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Տվյալ իրավիճակում չի ապահովվում նաև իրավունքի գերակայության, հետևաբար և՛ Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը (ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011 թ. ՍԴՈ-984 որոշումը),



2) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ եթե անձը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայի 1-ին բաժնում:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել դատարանի վերջնական վճիռները ցան-

կացած գործի վերաբերյալ, որում նրանք կողմեր են: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը նախևառաջ բխում է Կոնվենցիայի 1-ին հոդվածից, որով սահմանվում է իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար Կոնվենցիայի 1-ին բաժնում սահմանված իրավունքներն ու ազատությունները ապահովելու՝ Բարձր պայմանավորվող կողմերի պարտականությունը: Բացի դրանից՝ կոնվենցիան 46-րդ հոդվածում հստակ սահմանել է, որ կոնվենցիայի անդամ պետությունը պարտավոր է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի վերահսկողությամբ կատարել Եվրոպական դատարանի այն վճիռները, որոնք կայացվել են տվյալ պետության՝ որպես կողմ հանդես եկած գործերով: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի վճռի կատարման հետ կապված պետության կոնկրետ պարտականությունների բովանդակությունը կոնվենցիայով հստակ ամրագրված չէ. այն բացահայտվել է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միջոցով:

Այսպես, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ վճիռը, որով Եվրոպական դատարանը խախտում է արձանագրում, պատասխանող պետության համար սահմանում է իրավաբանական պարտավորություն, որը ոչ միայն վերաբերում է շահագրգիռ անձանց արդարացի փոխհատուցում վճարելուն, այլ նաև ենթադրում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընդհանուր և (կամ), անհրաժեշտության դեպքում անհատական միջոցների կիրառում, որոնց ձեռնարկումն անհրաժեշտ է ներպետական իրավական համակարգում Եվրոպական

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



դատարանի արձանագրած խախտումները դադարեցնելու և դրանց հետևանքները հնարավորինս վերացնելու համար: Բացի դրանից՝ պետությունն ազատ է նախարարների կոմիտեի վերահսկողությամբ կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համատեղելի լինեն Եվրոպական դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ (տե՛ս «Scozzari and Giunta v. Italy» գործով Եվրոպական դատարանի 13.07.2000 թվականի վճիռը, 249-րդ կետ):

Եվրոպական դատարանի վճռի կատարման ուղղված անհատական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ կոնվենցիայի մասնակից պետությունների վրա դրվող միջազգային իրավական պարտավորությունը բովանդակային առումով ունի եռաստիճան կառուցվածք և ներառում է միմյանց հետ փոխկապված հետևյալ երեք իրավական պահանջները.

1. Եվրոպական դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցումը վճարելու պարտավորությունը,

2. կոնվենցիոն իրավունքի շարունակվող խախտումը դադարեցնելու պարտավորությունը,

3. «*restitutio in integrum*» սկզբունքից բխող՝ մինչև խախտումը գոյություն ունեցած դրությունը հնարավորինս վերականգնելու պարտավորությունը:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրում է, որ Եվրոպական դատարանի վճռի կատարման նպատակով պետության կողմից ձեռնարկվող անհատական միջոցները հասցեագրված են դիմումատուին, կիրառվում են Կոնվենցիայի խախտման հետևանքով դիմումատուի կրած բացասական հետևանքների վերացման և, վերջին հաշվով, մինչև խախտումը եղած դրության հնարավորինս վերականգնման (միջազգային իրավունքի հանրաճանաչ «*restitutio in integrum*» սկզբունք) նպատակով:

Եվրոպական դատարանն իր նախա-

դեպային իրավունքում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վճիռը, որով Եվրոպական դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, պատասխանող պետությանը պարտավորեցնում է դադարեցնել իրավախախտումը և դրա հետևանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը: Իսկ այն դեպքում, երբ «*restitutio in integrum*» սկզբունքի իրականացումը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում (տե՛ս «Papamichalopoulos and others v. Greece (Article 50)» գործով Եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, 34-րդ կետ, «Selçuk and Asker v. Turkey» գործով Եվրոպական դատարանի 24.04.1998 թվականի վճիռը, 125-րդ կետ):

Վճռաբեկ դատարանը միաժամանակ փաստում է, որ միջազգային իրավական պատասխանատվության առաջնային և հիմնարար «*restitutio in integrum*» սկզբունքը ենթադրում է մինչև խախտումը գոյություն ունեցած դրության հնարավորինս վերականգնումը և քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում ընդգրկում է «*inter alia*» հետևյալ միջոցառումները.

- դիմումատուին առնչվող գործի վերաբացում, վերաքննություն,
- կոնվենցիայի խախտման հանգեցնող որոշման չկատարում,
- կոնվենցիայի խախտմամբ մերժված իրավական կարգավիճակի տրամադրում և այլն:

Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանի վճռով խախտում հայտնաբերվելու դեպքում տվյալ գործով պետության կողմից ձեռնարկվող կոնկրետ միջոցներին, ապա Եվրոպական դատարանի մեծ պալատի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն պատասխանատու պետությունից պահանջվող միջոցառումները կախված են կոնկրետ գործի

հանգամանքներից, և պետք է սահմանվեն գործի վերաբերյալ Եվրոպական դատարանի կայացրած վճռի լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը (տե՛ս «Öcalan v. Turkey» գործով Եվրոպական դատարանի 12.05.2005 թվականի վճիռը, 210-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է Եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն իրավունքի խախտում հայտնաբերվելու դեպքում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորությունը, որը բխում է կոնվենցիոն իրավունքի խախտման դեպքում պետության կողմից անհատական միջոցառումներ ձեռնարկելու միջազգային-իրավական պարտավորությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 2-րդ (նոր ԶԳ-Օ 419 հոդվածի 1-ին մասի 2-րդ) կետի ուսումնասիրությունից բխում է, որ անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, որը հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ, հիմք է դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 19.01.2000 թվականի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին» թիվ R (2000)2 հանձնարարականը, անդրադառնալով «*restitutio in integrum*» սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոցներին, դրանց թվում մատնանշում է գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը:

Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումը, մասնավորապես՝ գործի վերաբացումը, անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, ինչի պարագայում գործի վերաբացման անհրաժեշտությունը գերակայում է իրավական որոշակիության սկզբունքի մաս կազմող՝ դատական ակտերի վերջնական լինելու «*res judicata*» սկզբունքի նկատմամբ:

1) ճյուրական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ,

2) դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա վարույթի ելքը որոշող դատական ակտի բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան տվյալ դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանը ցույց է տալիս, որ նոր հանգամանքի հիմքով գործի վարույթի վերսկսումը կարող է տեղի ունենալ միայն «բացառիկ» դեպքերում, հատկապես երբ գործի քննությունն իրականացվել է կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտմամբ: Տվյալ դեպքում հատուցման ամենապատշաճ ձևը կլինի վարույթի վերաբացումն ու գործի նոր քննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջների պահպանմամբ: Այսպես, օրինակ, Եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության դեմ կայացված իր վճիռներից մեկում կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում հայտնաբերելուց հետո նշել է, որ այն դեպքում, երբ դատաքննությունն իրականացվել է կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության



իրավունքի խախտմամբ, փոխհատուցման ամենապատշաճ ձևը, որպես կանոն, վարույթի վերաբացումն ու արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան գործի վերաքննության կազմակերպումն է (տե՛ս Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 10.04.2012 թվականի վճիռը, 104-րդ կետ)¹⁰,

3) Բարձրագույն դատական խորհուրդն ընդունել է որոշում, որով տվյալ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար:

Ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակագրկում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարած այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրկում է դատական իշխանությանը (ՀՀ դատական օրենսգրքի 142-րդ հոդվ. 2-3-րդ մասեր),

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել ժառանգության վկայագիրը կամ այն գործարքը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտը կայացնելու համար,

5) բեկանվել է այն դատական ակտը,

դատավճիռը, կամ ընդունման պահից անվավեր է ճանաչվել այն վարչական ակտը, որը հիմք է ծառայել տվյալ դատական ակտի կայացման համար,

6) վարչական դատարանն ուժի մեջ մտնելու պահից անվավեր է ճանաչել այն նորմատիվ իրավական ակտը, որի հիման վրա կայացվել է տվյալ դատական ակտը:

Վերջին հանգամանքի կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է **դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են:** Անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական» իրավունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադառնալով այս հարցին՝ նշել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն և ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա (տե՛ս Լը Քոմպտեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով Եվրոպական դատարանի 23.06.1981 թվականի որոշումը, պարբ. 47, Բենքինեմ ընդդեմ Նիդերլանդների, թիվ 8848/80 դիմումով Եվրոպական դատարանի 23.10.1985 թվականի որոշում, պարբ. 32):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ըն-



դրոնվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով. բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածը հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ, ըստ էության, պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են հայցվորի՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Հետևաբար՝ դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դի-

մելով վարչական դատարան՝ անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են: Ընդ որում՝ չի կարող անվավեր ճանաչվել ոչ իրավաչափ այն վարչական ակտը, որը չի կարող խախտել որևէ անձի, Հայաստանի Հանրապետության կամ որևէ համայնքի իրավունք¹¹:

ՀՀ գործող ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերը նախորդ՝ 1998 թ. ՔԴՕ 204.33-րդ հոդվածում առկա չէր, որը, մեր կարծիքով, համարվում է նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու հիմքերի էական բարելավում:

Սակայն, ՔԴՕ 419-րդ հոդվածով նախատեսված հիմքերը հնարավորություն չեն տալիս դատական ակտ կայացվելուց հետո գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նոր ապացույց ձեռք բերելուց հետո գործը նորոգելու: Իսկ ՔԴՕ 390-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա եզրափակիչ դատական ակտն անձը չի կարող բողոքարկել Վճռաբեկ դատարան, եթե նա նույն հիմքերով չի բողոքարկել դատական ակտը վերաքննիչ դատարանում:

Իրական կյանքում հնարավոր են դեպքեր, երբ անձն առաջին ատյանի դատական ակտը բողոքարկում է Վերաքննիչ դատարան, չունենալով այն անհրաժեշտ ապացույցը, որը կհիմնավորեր վերաքննիչ բողոքի ճշտությունը: Մինչև վերաքննիչ դատարանում գործը քննելը անձը դիմել է դատախազություն, որ պարզեն որոշակի հանգամանքներ, բայց պատասխան ստացել է միայն գործը վերաքննիչ դատարանում քննելուց և որոշում կայացվելուց հետո: Այնուհետև վերջինս կատարել է ուսումնասիրություն

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



ու կազմել արձանագրություն կամ ակտ այդ անձի օգտին: Քանի որ վերաքննիչ ատյանի գործն ըստ էության լուծող դատական ակտը (որոշումը) օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո (ՔԴ-Օ 387 հոդվ.), ուստի շահագրգռված անձն այլևս գրկվում է իր իրավունքները վճռաբեկության կարգով պաշտպանելու հնարավորությունից, որովհետև եզրափակիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի (ՔԴ-Օ 391 հոդվ.):

Դատախազության կազմած արձանագրության հիման վրա, եթե դատախազը ձեռք է բերել նոր ապացույց (այլ ոչ թե նոր հանգամանք), ապա դա պետք է հիմք հանդիսանա վճռաբեկ բողոքարկման համար: Օրենսգիրքը չի նախատեսում նոր ապացույց ձեռք բերվելու դեպքում գործը նոր հանգամանքներով նորոգելու ինստիտուտ, հետևաբար նոր ապացույցը նոր վճռաբեկ բողոքի հիմք է հանդիսանում:

Մեր կարծիքով, ՔԴ-Օ 394 հոդվածի 1-ին մասում պետք է 3-րդ կետով նախատեսել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու նոր` դատարանի կողմից հարգելի

ճանաչված հիմքով, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հողված 394 Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը

3. առերևույթ առկա է, որ գործին մասնակցող անձինք օբյեկտիվ պատճառներով գրկված են եղել անհրաժեշտ ապացույցները վերաքննիչ դատարան ներկայացնելու հնարավորությունից»:

Սահմանադրական դատարանն իր 15.07.2011թ. ՄԴՌ-984 որոշման մեջ արձանագրում է, որ դատական ակտերի վերանայման արդյունավետ ինստիտուտի գոյությունը ևս պետք է հիմնվի այն տրամաբանության վրա, որ պետությունը պետք է ապահովի խախտված իրավունքների վերականգնումը, քանզի քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության պարտավորությունը ենթադրում է, որ պետությունն ինքն է պատասխանատու դատական ակտերով խախտված իրավունքների վերականգնման համար: Պետության նման պարտավորության կատարումն ապահովելու բավականին արդյունավետ միջոց է դատական ակտերի վերանայումն իրավունքի ուժով: Այս մեթոդաբանությունն է ընկած, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման հիմքում:

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

¹ Стен Громошина Н.А., О независимости судей и новых основаниях пересмотра судебных актов по вновь открывшимся обстоятельствам. Законы России: опыт, анализ, практика, 2011, № 10, էջ 10-14:

² Стен Աճառյան Հ., Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, երրորդ հատոր, Կ-Մ, Երևան, 1974, էջ 289:

³ Стен Гражданский процесс. Учебник. Под ред. М.К. Треушников, М., 2006, էջ 270:

⁴ Այսուհետ՝ ՔԴ-Օ:

⁵ Стен Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն: Չորրորդ հրատ., Երևան, Ոսկան Երևանցի, 2012, էջ 538:

⁶ Стен Гражданский процесс. Учебник. Под ред. М.К. Треушников, М., 2014, էջ 687-688,

Պետրոսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 539:

⁷ Стен ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011 թ. ՄԴՌ-984 և 31.05.2013 թ. ՄԴՌ-1099 որոշումները:

⁸ Стен ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011 թ. ՄԴՌ-984 որոշման 7-րդ կետը:

⁹ Стен ՀՀ Սահմանադրական դատարանի 15.07.2011 թ. ՄԴՌ-984 և 18.09.2013 թ. ՄԴՌ-1114 որոշումները:

¹⁰ Стен ՀՀ Վճռաբեկ դատարանի 07.04.2017 թ. քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0299/02/08 որոշումը:

¹¹ Стен ՀՀ Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թ. վարչական գործ թիվ ՎԴ/0909/05/10 և ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թ. վարչական գործ թիվ ՎԴ/2085/05/12 որոշումները:

RESUME - РЕЗЮМЕ

GROUND OF REVIEW OF JUDICIAL ACTS BASED ON NEW CIRCUMSTANCES ACCORDING TO THE NEW CIVIL PROCEDURE CODE RA

A. Nazaretyan

*PhD Student at the Department of Civil Law and Civil Procedure
Law of Russian- Armenian University*

In this article, the author, based on the innovations of Article 419 of the new Civil Procedure Code of the Republic of Armenia and numerous decisions of the RA Constitutional and RA Cassation Courts made on specific cases, has analyzed the grounds and order of review of the legally valid judicial acts under the new circumstances.

Keywords: *new circumstances, review, evidences, facts, requirements, objections, restoration, ECHR.*

ОСНОВАНИЯ ПЕРЕСМОТРА СУДЕБНЫХ АКТОВ ПО НОВЫМ ОБСТОЯТЕЛЬСТВАМ ПО НОВОМУ ГРАЖДАНСКОМУ ПРО- ЦЕССУАЛЬНОМУ КОДЕКСУ РА

А. Назаретян

*Соискатель кафедры гражданского права и гражданско-процессуального права
Российско-Армянского университета*

В настоящей статье автор на основе новшеств статьи 419 нового Гражданского процессуального кодекса РА и многочисленных вынесенных решений по конкретным делам Конституционного и Кассационного судов РА, проанализировал основания и порядок пересмотра вступивших в законную силу судебных актов по новым обстоятельствам.

Ключевые слова: *новые обстоятельства, пересмотр, доказательства, факты, требования, протестирования, восстановление, ЕСПЧ.*

Բանալի բառեր - *նոր հանգամանքներ, վերանայում, ապացույցներ, փաստեր, պահանջներ, առարկություններ, վերականգնում, ՄԻԵԴ:*

Ա. Նազարեթյան - Հայ-Ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ artur.srapich@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 20.08.2019, տրվել է գրախոսության՝ 20.08.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Ռ. Պետրոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 24.10.2019